միածին։ Անոր հոն անցուցած կեանքի մասին կը պակ-
սին տեղեկութիւններ։ Մինաս Ամդեցի, որ Եղիազարի
օրով ապրած է Էջմիածին նախ՝ 1682 Օգոստ. 27 – Նոյ.
7, երկրորդ՝ 1685 Յուլիս 2 – Նոյ. 3 և երրորդ՝ 1688
Մարտ 10 – 1690 Յունիս 2, իր Օրագրութեան մէջ չի
յիշեր Գրիգորիս վարդապետի անունը։ Անգամ մը մի-
այն, 1690 Փետր. 6ին, կ'արձանագրէ. «Ժամ եկաւ
Վեհն (Եղիազար) և Գ աբեղայի իշխանութիւն ետ՝
Ովասափին, Պետրոսին եւ Գրիգորին» (թղ. 130ա)։
Այստեղ յիշուած Գրիգոր աբեղան անկասկած է՝ նոյն
ինքն Գրիգորիս Քէօմիւրճեան։ Ամդեցի ամէն անգամ
Գրիգոր վարդապետ կ'անուանէ զայն։

Հատորիս Յաւելուածին մէջ (էջ 574) զետեղած
ենք Երեմիայի երկու փոքրիկ ուղերձները, բաղկա-
ցած՝ մէկը տասը և միւսը վեց տողերէ։ Ատոնցմէ կը
յայտնուի թէ ան Զուղայեցի խոճայի մը միջոցաւ Կ.
Պոլսէն աւանդ (ամանաթ) մը ղրկած է Էջմիածին իր
կրօնաւոր զաւկին.

«Երեմիայի որդի կոչեալ Տէր Գրիգորիս,
Որ կայ ի սպաս հայրապետին հանուրց ազգիս։
Ո՛վ դու խոճայ զայս ամանաթ պահել պարտիս,
Ամբողջ առ այն հասուցանել ըզհոգ տանիս»։

Եղիազար կաթողիկոսի կեանքի վերջին օրերուն
Գրիգորիս վրդ. վերջնականապէս կը հեռանայ Էջմիա-
ծինէն։ Իր մեկնելու օրը Հայրապետը կու տայ անոր
իր հուսկ օրհնութիւնը ու կը յանձնէ նամակ մը իր Զէ-
լէպի հօր ուղղուած, ու ան Ս. Ծննդեան պահոց առա-
ջին օրը կը հասնի Կ. Պոլիս (Յաւել. էջ 479)։ Եղիա-
զար մասնաւոր կոնդակով մը անոր տուած էր իրա-
ւունք վարդապետական գաւազանին հետ կրելու նաև
թագ և եմիփորոն։ Գրիգորիս վրդ. Ս. Ծննդեան պա-
հոց երկրորդ օրը (31 Դեկտ.) իր հօրը հետ միասին